ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

12 օգոստոսի 2016 թվականի **թիվ 14** քաղ. Սոչի

Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում ապրանքների հետագծելիությունն ապահովելու մեխանիզմի ստեղծման հիմնական մոտեցումների մասին

Եվրասիական միջկառավարական խորհրդի 2016 թվականի մայիսի 20-ի թիվ 8 կարգադրությունը կատարելու նպատակով՝

1. Ի գիտություն ընդունել «Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում ապրանքների հետագծելիությունն ապահովելու մեխանիզմ սահմանելու մասին» համաձայնագրի նախագծով (այսուհետ՝ Համաձայնագրի նախագիծ, կցվում է) առաջարկված մոտեցումները:

2. Խնդրել Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) անդամ պետությունների կառավարություններին եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) մինչեւ 2016 թվականի հոկտեմբերի 1-ը լրամշակել Համաձայնագրի նախագիծը՝ ելնելով հետեւյալից.

2.1. Համաձայնագրի նախագծի պատրաստման նպատակով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

ա) **ապրանքներ**՝ Միության մաքսային տարածք ներմուծված եւ «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան բաց թողնված գույք.

բ) **ապրանքների շրջանառություն**՝ Միության մաքսային տարածք ապրանքների ներմուծում եւ Միության անդամ պետությունների տարածքներում դրանց իրացում.

գ) **հետագծելիություն՝** ապրանքների շրջանառության հսկողության նպատակով Համաձայնագրով սահմանված պահանջներին համապատասխան ապրանքների հետ իրականացվող գործառնությունների հաշվառումը կազմակերպելու առանձնահատկություններ:

2.2. Համաձայնագրի մոտեցումների (սկզբունքների) հիման վրա պետք է ապահովվի՝

ա) Միության անդամ պետությունների միջեւ փոխադարձ առեւտրի շրջանակներում տեղափոխվող ապրանքների շրջանառության օրինականության հաստատումը.

բ) անձանց կողմից մաքսային եւ հարկային վճարների վճարումից խուսափելու տարբեր սխեմաների օգտագործումը բացառող պայմանների ստեղծումը:

2.3. Հետագծելիությունն ապահովվում է ապրանքային խմբաքանակի փաստաթղթային նույնականացման հաշվին, ինչպես նաեւ Հանձնաժողովի խորհրդի կողմից սահմանված դեպքերում՝ ապրանքի կամ դրա փաթեթվածքի վրա նույնականացման հատուկ նշանների կիրառման հաշվին:

2.4. Ապրանքների հետագծելիության մեխանիզմն ընդգրկում է Միության մաքսային տարածք ներմուծվող ապրանքները: Միության անդամ պետությունների տարածքներում արտադրվող ապրանքները ենթակա չեն հետագծելիության:

2.5. Ներմուծվող ապրանքների մասով համաձայնագիրը կարգավորում է «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ապրանքները ձեւակերպելուց հետո առաջացող իրավահարաբերությունները:

2.6. Ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածքից Միության մաքսային տարածքի մնացած մաս ներմուծելու ժամանակ դրանց հետագծելիության շարունակականությունն ապահովելու համար Միության մյուս անդամ պետություններին անհրաժեշտ տեղեկությունների փոխանցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից այդ տեղեկությունները տարանցիկ փոխադրման հայտարարագրում ներառելու միջոցով:

2.7 Համաձայնագիրն իրականացնելու նպատակով Կողմերը պետք է ապահովեն ապրանքաուղեկից փաստաթղթերի եւ (կամ) ապրանքների հետագծելիությունն ապահովող այլ գործիքների (օրինակ՝ էլեկտրոնային հաշիվ ապրանքագրերի) էլեկտրոնային ձեւով պարտադիր ձեւակերպման ներդրումը:

2.8. Միության տարբեր անդամ պետությունների ապրանքների հետագծելիության ապահովման ազգային համակարգերի միջեւ տեղեկատվության փոխանակումն իրականացվում է Միության ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցով:

2.9. Տեղեկատվական փոխգործակցության ժամանակ Միության այն անդամ պետության լիազորված մարմինը, որի տարածք ապրանքները ներմուծվում են Միության այն անդամ պետության լիազորված մարմնից, որի տարածքից այդ ապրանքները արտահանվում են, առցանց ռեժիմով ստանում է տեղեկատվություն այն գործարքի մասին, որի հիման վրա ապրանքները Միության մեկ անդամ պետության տարածքից տեղափոխվում են Միության մյուս անդամ պետության տարածք:

Միության այն անդամ պետության տարածքում կատարված նախորդ գործարքների մասին տեղեկատվությունը, որի տարածքից ներմուծվում են հետագծելի ապրանքները, առանձին հարցման հիման վրա էլեկտրոնային տեսքով ուղարկվում է Միության այն անդամ պետության լիազորված մարմնի կողմից, որի տարածք այդ ապրանքները ներմուծվում են:

2.10. Միության անդամ պետությունների կառավարությունները սահմանում են ապրանքների հետագծելիության համար անհրաժեշտ տեղեկությունների ուղարկման համար պատասխանատու լիազորված մարմնին:

2.11. «Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում ապրանքների հետագծելիությունն ապահովելու մեխանիզմ սահմանելու մասին» համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Միության մաքսային տարածք ներմուծված եւ այդ տարածքում փաստացի գտնվող բոլոր ապրանքները Համաձայնագրով սահմանված կարգով եւ պայմաններով ենթակա են ներառման հետագծելիության համակարգում:

2.12. Համաձայնագրի տեքստում սահմանել ապրանքների հետագծելիությունն ապահովելու համար անհրաժեշտ տեղեկությունների սպառիչ ցանկ:

3. Նշել, որ Միության անդամ պետությունները մտադիր են՝

3.1. 2018 թվականի փետրվարի 1-ից սկսել հետագծելիության մեխանիզմի ներդրման պիլոտային նախագծի անցկացումը:

Պիլոտային նախագիծը կտարածվի սահմանափակ քանակությամբ ապրանքային դիրքերի վրա (նվազագույնը 4 նիշերի մակարդակով՝ ըստ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ))՝ Հանձնաժողովի խորհրդի կողմից սահմանվող ցանկին համապատասխան:

3.2. Հանձնաժողովի խորհրդի որոշմանը համապատասխան՝ 2018 թվականի ընթացքում անցնել մշտական հիմունքներով ապրանքների հետագծելիության մեխանիզմի շահագործմանը՝ ելնելով պիլոտային նախագծի անցկացման արդյունքներից:

Մշտական հիմունքներով հետագծելիության ենթակա ապրանքների ցանկը՝ ԱՏԳ ԱԱ ծածկագրերի նշմամբ, սահմանվում է Հանձնաժողովի խորհրդի կողմից:

4. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում, դրա հրապարակման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ղրղզստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**

Նախագիծ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԵԱՏՄ անդամ պետություններում ապրանքների հետագծելիությունն ապահովելու մեխանիզմ սահմանելու մասին

Ապրանքների շրջանառության հետագծելիության նկատմամբ հսկողություն ապահովելու նպատակով Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կառավարությունները (այսուհետ՝ Կողմեր) համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հետեւյալ հասկացությունները՝

ապրանքների շրջանառություն՝ ապրանքների ներմուծումը ԵԱՏՄ մաքսային տարածք, ԵԱՏՄ անդամ պետությունների տարածքներում ապրանքների պահպանումը, տրանսպորտային փոխադրումը, իրացումը (վաճառքը).

մեծածախ առեւտուր՝ առեւտրային գործունեության տեսակ, որը կապված է ապրանքների ձեռքբերման եւ վաճառքի հետ՝ դրանք ձեռնարկատիրական գործունեության մեջ (այդ թվում՝ վերավաճառքի համար) կամ անձնական, ընտանեկան, կենցաղային եւ այլ նմանատիպ օգտագործման հետ կապ չունեցող նպատակներով օգտագործելու համար.

հետագծելիություն՝ ապրանքների ներմուծման պահից սկսած՝ դրանց շրջանառության բոլոր փուլերում ապրանքների շարժի փաստաթղթային հաշվառում եւ հսկողություն.

մանրածախ առեւտուր՝ առեւտրային գործունեության տեսակ, որը կապված է ապրանքների ձեռքբերման եւ վաճառքի հետ՝ դրանք անձնական, ընտանեկան,

կենցաղային եւ ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապ չունեցող այլ նպատակներով օգտագործելու համար.

ապրանքներ՝ ԵԱՏՄ մաքսային տարածք ներմուծված եւ «Ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգին համապատասխան բաց թողնված գույք.

Հոդված 2

1. Սույն Համաձայնագրով սահմանվում է ԵԱՏՄ անդամ պետություններում ապրանքների շրջանառության հետագծելիության մեխանիզմի գործունեության կարգը եւ ԵԱՏՄ անդամ պետությունների իրավասու (լիազորված) մարմինների միջեւ տեղեկատվության փոխադարձ փոխանակումը:

2. Սույն Համաձայնագրի գործողությունը տարածվում է ապրանքների շրջանառության հետ կապված իրավահարաբերությունների վրա՝ բացառությամբ մանրածախ առեւտրի:

Հոդված 3

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը հաստատում է ապրանքների ցանկը (այսուհետ՝ Ցանկ) եւ դրանց հետագծելիության մեխանիզմը ներդնելու փուլերը:

2. Ցանկը հաստատելու մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշումն ուժի մեջ է մտնում ոչ շուտ, քան այդ որոշման պաշտոնական հրապարակումից 60 օրացուցային օրը լրանալուց հետո: Ապրանքը ցանկից հանելու մասին որոշումն ուժի մեջ է մտնում «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի 16-րդ կետով նախատեսված կարգով («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 1-ին հավելված):

Հոդված 4

1. Ապրանքների շրջանառության հետագծելիության մեխանիզմը կիրառվում է ցանկում ներառված ապրանքների նկատմամբ՝ ապրանքների հետագծելիության մեխանիզմի ներդրման ժամկետներին համապատասխան՝ սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն:

2. Ապրանքների շրջանառության հետագծելիության մեխանիզմի կիրառումը դադարեցվում է՝

ցանկում ընդգրկված՝ ԵԱՏՄ անդամ պետության տարածք ներմուծված եւ ԵԱՏՄ անդամ պետության տարածքում արտադրության (վերամշակման) համար օգտագործված ապրանքների մասով՝ արտադրության (վերամշակման) համար դրանց օգտագործման պահից.

անհաղթահարելի ուժ ներկայացնող հանգամանքների պատճառով կորած, ոչնչացված ապրանքների մասով՝ այդ կորստի, ոչնչացման պահից:

Հոդված 5

1. Ապրանքների շրջանառության հետագծելիության մեխանիզմը հիմնվում է ապրանքների հետագծելիությունն ապահովող ազգային համակարգերում ապրանքների շրջանառության մասին պարունակվող տեղեկությունների վրա եւ իրականացվում է ԵԱՏՄ անդամ պետությունների իրավասու (լիազորված) մարմինների միջեւ տեղեկատվության փոխադարձ փոխանակման միջոցով:

2. Ապրանքների հետագծելիությունն ապահովող ազգային համակարգը իրականացվում է հետեւյալ աղբյուրներից տեղեկությունների հավաքագրման, հաշվառման, հսկողության եւ վերլուծության միջոցով՝

«ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձեւակերպվող ապրանքների հայտարարագրեր.

էլեկտրոնային հաշիվ ապրանքագրեր եւ (կամ) ԵԱՏՄ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր.

ԵԱՏՄ այլ անդամ պետությունների ազգային համակարգերից ստացվող փաստաթղթեր:

3. Կողմերը փոխանակում են ԵԱՏՄ անդամ պետությունների ազգային համակարգերում պարունակվող տեղեկությունները, ներառյալ՝

ապրանքները իրացնող եւ ձեռք բերող հարկ վճարողի անվանումը.

հարկ վճարողի նույնականացման ծածկագիրը (համարը). ապրանքների հայտարարագրի գրանցման համարը. էլեկտրոնային հաշիվ-ապրանքագրերի եւ (կամ) ԵԱՏՄ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերի գրանցման համարը եւ դուրսգրման ամսաթիվը.

ապրանքների հայտարարագրում նշված ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագիրը. ապրանքների անվանումը.

ապրանքների հայտարարագրում նշված ապրանքների հերթական համարը. ապրանքների քանակը (ծավալը)՝ քանակի (ծավալի) չափման միավորի նշմամբ.

ԵԱՏՄ անդամ պետությունների տարածքում ապրանքների նշանակման կետը:

Տեղեկությունները, փոխանակման ժամկետներն ու կարգը հաստատվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշմամբ:

Հոդված 6

1. ԵԱՏՄ անդամ պետություններից մեկի տարածք (տարածքից) ԵԱՏՄ մյուս անդամ պետության տարածքից (տարածք) ապրանքների ներմուծման (արտահանման) ժամանակ Կողմերի իրավասու (լիազորված) մարմինները իրականացնում են սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված տեղեկությունների փոխանակումը՝ ապրանքների այդպիսի ներմուծման (արտահանման) համար ձեւակերպված փաստաթղթերի հիման վրա:

2. Ավելի քան երկու ԵԱՏՄ անդամ պետության հարկ վճարողների կողմից բազմակողմ գործարքներ իրականացնելու ժամանակ սույն Համաձայնագրի 5-րդ

հոդվածի 3-րդ կետում նախատեսված տեղեկությունների փոխանակումն իրականացվում է ԵԱՏՄ այդ անդամ պետությունների իրավասու (լիազորված) մարմինների միջեւ:

3. ԵԱՏՄ անդամ պետության տարածքով ապրանքներն այն գործարքների համար տեղափոխելիս, որոնց մասնակիցը այդ պետության հարկ վճարողը չէ, սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված տեղեկությունները փոխանցվում են նաեւ այդ պետության իրավասու (լիազորված) մարմնին:

Սույն կետի դրույթները չեն տարածվում օդային տրանսպորտով փոխադրումների վրա:

Հոդված 7

Իրավասու (լիազորված) մարմիններն ապահովում են ցանկում ներառված ապրանքների շրջանառության նկատմամբ հսկողություն՝ ԵԱՏՄ անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 8

ԵԱՏՄ ցանկացած անդամ պետության նախաձեռնությամբ եւ փոխադարձ պայմանավորվածությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Արձանագրություններն ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 9–րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ ավանդապահը դիվանագիտական ուղիներով ստանում է անդամ պետությունների կողմից սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական

ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը:

Կատարված է _____ քաղաքում 20____ թվականի «_____»–ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը՝ որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, ԵԱՏՄ անդամ պետություններից յուրաքանչյուրին կտրամադրի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից	Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից	Ղազախստանի Հանրապետության Կառավարության կողմից	Ղրղզստանի Հանրապետության կառավարության կողմից	Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից